# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի ապրիլի 09-ին կնքված ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-326 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ-ի նոյեմբերի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ :** Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի հավելված 2 հանդիսացող գնման ժամանակացույցում, ինչպես նաև Պայմանագրի 4.1 կետում կատարել փոփոխություններ:

**Փոփոխության նկարագրություն:** Վճարման ժամանակացույցի և 4.1 կետի փոփոխություն:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 7.3 կետ, <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշման 60-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 511 787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
09.04.2015թ. ԿՆՔՎԱԾ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-326 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «10» նոյեմբերի 2015թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վան-Լան ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Հակոբջանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.04.2015թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-326 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1 կետում **«450 000 (չորս հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ» բառերը փոխարինել **«540 000 (հինգ հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ» բառերով:

1.2 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու *պարտականությունները թողնվում են անփոփոխ:*

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«Վան-Լան ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Վանաձոր, Նժդեհի 9/2ա |
| ՀՎՀՀ՝ 02583241 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 900011192151, 900011192052 | Հ/Հ՝ 2050222072241001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ՝ 06936171 |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Մ. [illegible] |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
09.04.2015թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-1-326 պայմանագրի
10.11.2015թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| **Ծրագիր՝ 03 03 01 06՝ ՀՀ դատարանների պահպանում** | | | | | | | | | | | |
| 1. | Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ | 202500 | 202500 | 202500 | 337500 | 337500 | 337500 | 450000 | 450000 | 450000 | **450000** |
| **Ծրագիր՝ 03 03 01 05՝ ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ** | | | | | | | | | | | |
| 1. | Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ | | | | | | | | 90000 | 90000 | **90000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151, 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
***«Վան-Լան ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ***

Հասցե՝ ք. Վանաձոր, Նժդեհի 9/2ա
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050222072241001
ՀՎՀՀ՝ 06936171

Տնօրեն՝ Մ.Հ[illegible]

(ստորագրություն)
Կ.Տ